կիւնէ, Զուլովանց, Խաւնոց (Հաւնոց)[1], Զուրմավանց, Խարդ, Խանջուր, Արտուստ, Աբրանիս, Կորնջուր գեղերը:

Կարադաղ լեռներից իջնում են Լունոս, Հոնս առուակները, որոգում են համանուն գեղերը եւ խառնւում Ճորոխին ձախից, Իշբոնոս առուակի դիմաց, որոնք կազմում են Սպերի եւ Բայբուրդի սահմանները: Բալախոռի խառնունքը Ճորոխին 5800′ բարձրութիւն ունի:

Բալախոռի դաշտը 6լ.—12եր. կիլոմետր տարածութիւն ունի, իսկ Սենուսի դաշտը 4լ.—10եր. ունի, որոնք լաւ մշակում են եւ երկրագործութեան հացահատիկների ցանքի յարմար խիստ բարեբեր հողեր ունին: Բալախոռը իր դաշտերով, սարալանջերով աւելի նման է Բարձր-Հայքին եւ Տարուբերանին. Ժողովուրդն աւելի հացահատիկ է մշակում եւ գութան ու սայլ տարածուած են: Ընդհանրապէս ժողովրդի տնտեսականն ընկած է, բայց Բալախոռի բնակչութիւնն աւելի լաւ վիճակ ունի քան թէ Հովտիկում:

զացել մուացնել տալ ժողովրդին իր նախնական մոր՝ Անահիտի յիշատակարանը:

1 Հաւնոց գեղը ունի ամրոց, աւերակ տաճար, դղեակի հողաթումբն է մնացել եւ նոյն իսկ աչքադարեան քաղաքի պարիսպները: Արդեօք Սարի-Կայա բարձունքից իջած Ջինջուլ առուակը եւ Հաւնոց գեղը Հաւնունիների կալուածների մասը չեն կազմում: Թէեւ չի կարելի որոշ բան ասել, բայց անունը շատ հին է, փոփոխման ենթարկուած չէ: